ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/89

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի՝

Մասնակցությամբ՝

«Մեգիէլ» ՍՊԸ-ի տնօրեն Ս. Փարիզյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 273.110.03081)

«Մեգիէլ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Ա. Սարգսյանի (լիազորագիր տրված՝ 02.12.2021թ.),

քննելով «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 30.11.2021թ. ներկայացված և 30.11.2021թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/89 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1.<u>«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Մեգիէլ» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 30.11.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1. Վեճի առարկան.

1.1 «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության (հետայսու՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12 ծածկագրով բաց մրցույթ, որն իրականացվելու է մեկ փուլով:

1.2 Հրավերը հրապարակվել է 16.11.2021թ. և մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 01.12.2021թ ժամը 14:00-ն ներառյալ: Հայտերի բացման ժամկետն է 01.12.2021թ ժամը 14:00-ն:

1.3 «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ Ընկերություն) ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12 ծածկագրով մրցույթին (հետայսու՝ Մրցույթ) մասնակցելու նպատակով ուսումնասիրելով հրավերը՝ արձանագրել է, որ Մրցույթի 250-251 չափաբաժինների տեխնիկական բնութագրերը չեն ապահովում «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերի, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ սահմանված կարգավորումների պահանջները, որը հանգեցնելու է տնտեսվարող սուբյեկտի ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով երաշխավորված իրավունքների խախտման:

2. Բողոքի փաստական և իրավական հիմքերը.

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման (հետայսու՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությանբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Ներկայացված նորմերի վերլուծությունից փաստում ենք, որ գնումների օրենսդրությունը հիմնվում է գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, ապահովելով գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հատակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովել հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը: (....)

Մրցույթի 250-րդ չափաբաժնով Պատվիրատուն պահանջում է տիտանային ամրակներ միջին՝ և ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Տիտանային ամրակներ միջին, քարտրիճով, յուրաքանչյուր քարտրիճում 6 հատիկ ամրակ, որը համարվում է չափման 1 միավոր: Ամրակը դիստալ փակման ձևով, 1-2,5 մմ անոթների համար: Չափերը բաց վիճակում 3,0-3,3x5,0-5,3 մմ, փակած վիճակում 5,0-6,0 մմ, երկարաձիգ և զուգահեռ ակոսիներով ներքին մակերեսին, ֆիկսացիան ապահովելու համար: Ամրակի արտաքին մակերեսին ակոսիկներ՝ համապատասխանող Պատվիրատուի մոտ առկա սեղմակներին:

Մրցույթի 251-րդ չափաբաժնով Պատվիրատուն պահանջում է տիտանային ամրակներ փոքր՝ հետևյալ տեխնիկական բնութագրով.

Տիտանային ամրակներ փոքր, քարտրիճով, յուրաքանչյուր քարտրիճում 6 հատիկ ամրակ որը համարվում է չափման 1 միավոր: Ամրակը դիստալ փակման ձևով, 0,3-1,5 մմ անոթների համար: Չափերը բաց վիճակում 2,0-2,2x3,0-3,2 մմ, փակած վիճակում 3,5-3,9 մմ, երկարաձիգ և զուգահեռ ակոսիներով ներքին մակերեսին, ֆիկսացիան ապահովելու համար: Ամրակի արտաքին մակերեսին ակոսիկներ՝ համապատասխանող Պատվիրատուի մոտ առկա սեղմակներին:

Պատվիրատուն մինչ 16.11.2021թ հրապարակած հրավերը, նախորդ հրավերներով, շուրջ 8 տարի, տիտանային ամրակների ձեռքբերման նպատակով ներկայացրած տեխնիկական բնութագրերով երբեք որպես ապրանքի կարևոր չափորոշիչ չի նշել «չափերը բաց վիճակում 3,0-3,3x5,0-5,3 մմ, փակած վիճակում 5,0-6,0 մմ» և «չափերը բաց վիճակում 2,0-2,2x3,0-3,2 մմ, փակած վիճակում 3,5-3,9 մմ» և տարիներ շարունակ ինչպես Պատվիարատուն, այնպես էլ այլ բուժ հաստատություններ ձեռք են բերում տիտանային ամրակներ՝ որոնց «չափերը բաց վիճակում 3,0-3,3x5,0-5,3 մմ, փակած վիճակում 5,0-6,0 մմ» և «չափերը բաց վիճակում 2,0-2,2x3,0-3,2 մմ, փակած վիճակում 3,5-3,9 մմ» սահմանափակման տակ չեն դրվել, քանի որ այս չափորոշիչը կարևոր հանգամանք չի եղել ձեռք բերվող ապրանքով նպատակին ծառայելու և անհրաժեշտ արդյունքին հասնելու համար:

Ինչպես նշեցինք տարիներ շարունակ Պատվիրատուն տիտանային ամրակի մրցույթ հայտարարելիս տեխնիկական բնութագրերով ներկայացված վերոնշված վիճարկվող չափորոշիչով չի սահմանափակել հնարավոր մասնակիցների մասնակցությունը չխոչնդոտելով՝ մրցակցությունը:

Հարց է առաջանում ինչպիսի կարիքի, նպատակի անհրաժեշտությունից ելնելով է և հիմնավորմամբ է, որ Պատվիրատուն որոշել է վերոնշված չափորոշիչի կարևորագույն

տարր լինելը և դրանով սահմանափակում է այլ մասնակիցների մասնակցության իրավունքը:

250-րդ և 251-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրով ներկայացրած՝ «չափերը բաց վիճակում 3,0-3,3x5,0-5,3 մմ, փակած վիճակում 5,0-6,0 մմ» և «չափերը բաց վիճակում 2,0-2,2x3,0-3,2 մմ, փակած վիճակում 3,5-3,9 մմ» չափորոշիչը սահմանափակում է Ընկերության մասնակցությունը և մեր կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրում ենք, որ ներկայացրած չափորոշիչներով տիտանային ամրակներն արտադրում է միայն Ethicon ֆիրման:

Օրենքի 3-րդ հոդվածը հստակ է սահմանում, որ ի թիվս այլի օրենքը պետք է ապահովի գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը: Գնման գործընթացը պետք է կազմակերպվի մրցակցային ոչ խտրական հիմունքներով, ապահովի պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Ընկերությունը տարիներ շարունակ և Պատվիրատուի կողմից անցկացվող մրցույթներով և այլ կլինիկաներում մատակարարել է այլ չափորոշիչով (օրինակ՝ միջին տիտանային ամրակի դեպքում՝ չափերը բաց վիճակում 3.02x4.68 փոքր ամրակի դեպքում՝ 1.98x2.87) տիտանային ամրակ, բարձր որոակի և մրցակցային գնով: Որակի և գնի նախընտրելի և մրցակցային լինելը հավաստվում է տարիների մատակարարմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ 1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

2. Գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

ՀՀ սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն՝

1.Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

ՀՀ սահմանադրության 86-րդ հոդվածն ամրագրում է՝

Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝

1) գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը. (....):

Պատվիրատուն որպես պետական սեկտրի մի օղակ պարտավոր է ղեկավարվի վերոհիշյալ նորմերով՝ ապահովելով պետության ստանձնած քաղաքականության նպատակները, ապահովելով գործարար միջավայրի առողջ մրցակցային մթնոլորտ, մինչդեռ՝ Պատվիրատուն ճիշտ հակառակն է անում տեխնիկական բնութագրերը ներկայացնում է սահմանափակող չափորոշիչներով, որը սահմանադրությամբ ամրագրված պետության քաղաքականության նպատակների հետ աղերս չունի, միևնույն ժամանակ խոչընդոտում է իրավաբանակյան անձի ձեռնարկատիրական գործունեությանը:

250-րդ չափաբաժնով «չափերը բաց վիճակում 3,0-3,3x5,0-5,3 մմ, փակած վիճակում 5,0-6,0 մմ» և 251- րդ չափաբաժնով «չափերը բաց վիճակում 2,0-2,2x3,0-3,2 մմ, փակած վիճակում 3,5-3,9 մմ» չափորոշիչներով բնութագրի առկայությունը Պատվիրատուն պարտավոր է հիմնավորի: Արդյոք շուրջ մեկ տասնամյակ ձեռք բերված տիտանային ամրակների, որոնք չեն ունեցել նշված չափորոշիչները, կիրառելիության արդյունքում վտանգել են հիվանդների առողջությունը և կյանքի որակի վրա բացասաբար է անդրադարձել, որ որոշել են այժմ այդ սահմանափակող բաղադրիչները ներառել 16.11.2021թ. հրապարակած հրավերում:

Պատվիրատուի հրապարակած տեխնիկական բնութագիրը 250-րդ և 251-րդ չափաբաժնի մասով է Ընկերության մասնակցությունը վիճարկվող անհիմն

սահմանափակում, խոչընդոտում չափաբաժիններով, որը խոչընդոտում է ձեռնարկատիրական գործունեությանը:

4. Պահանջ.

Պարտավորեցնել ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին փոփոխություններ կատարել հրավերի 250-րդ և 251-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում՝ բացառելով 250-րդ չափաբաժնում «չափերը բաց վիճակում 3,0-3,3x5,0-5,3 մմ, փակած վիճակում 5,0-6,0 մմ» և 251-րդ չափաբաժնում «չափերը բաց վիճակում 2,0-2,2x3,0-3,2 մմ, փակած վիճակում 3,5-3,9 մմ» սահմանափակող, խոչընդոտող չափորոշիչները»:

«Մեգիէլ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.12.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

<u>2. «Նորք-Մարաշ բժշական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Նորք-Մարաշ բժշական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու), Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 02.12.2021թ. թիվ 08-484 գրությամբ, բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ի պատասխան «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ 30.11.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2021/89 ծածկագրով բողոքի, հայտնում ենք հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի (այսուհետև՝ Օրենք) 13-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

«1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 22-րդ կետի համաձայն.

«Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի»

Պատվիրատուն հստակ պահպանել է օրենսդրությամբ նախատեսված պահանջները, տեխնիկական բնութագրերում չի ներառել խտրական պահանջներ, ընդ որում ապրանքի չափային ցուցանիշները ներկայացրել է տիրույթներով: Բողոքաբերի այն հայտարարությունը, որ 250-րդ և 251-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը բավարարում են միայն Ethicon ֆիրմայի արտադրանքին իրականությանը չի համապատասխանում, քանի որ այդ բնութագրերը համապատասխանում են մեկից ավելի արտադրողների ապրանքներին: Որպես ապացույց ներկայացնում ենք նաև դրանցից ևս մեկը՝ Grena ֆիրմայի արտադրանքի տվյալները.

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	Հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերը	
250	Տիտանային ամրակներ միջին	Տիտանային ամրակներ միջին, քարտրիճով, յուրաքանչյուր քարտրիճում 6 հատիկ ամրակ որը համարվում է չափման 1 միավոր: Ամրակը դիստալ փակման ձևով, 1- 2, 5 մմ անոթների համար: Չափերը բաց վիճակում 3,0-3,3x5,0-5,3 մմ, փակած վիճակում 5,0-6,0 մմ, երկարաձիգ և զուգահեռ ակոսիներով ներքին մակերեսին, ֆիկսացիան ապահովելու համար: Ամրակի արտաքին մակերեսին ակոսիկներ՝ համապատասխանող Պատվիրատուի մոտ առկա սեղմակներին	Grena https://www.grena.co.uk/our-products/titanium-ligating-clips/30-v-clip-titanium-ligating-clips Կցվում է նաև Տեխնիկական փաստաթուղթը.
251	Տիտանային ամրակներ փոքր	Տիտանային ամրակներ փոքր, քարտրիճով, յուրաքանչյուր քարտրիճում 6 հատիկ ամրակ որը համարվում է չափման 1 միավոր: Ամրակը դիստալ փակման ձևով, 0,3-1,5 մմ անոթների համար: Չափերը բաց վիճակում 2,0-2,2x3,0-3,2 մմ, փակած վիճակում 3,5-3,9 մմ, երկարաձիգ և զուգահեռ ակոսիներով ներքին մակերեսին, ֆիկսացիան ապահովելու համար: Ամրակի արտաքին մակերեսին ակոսիկներ՝ համապատասխանող Պատվիրատուի մոտ առկա սեղմակներին:	Grena https://www.grena.co.uk/our-products/titanium-ligating-clips/30-v-clip-titanium-ligating-clips Կցվում է նաև Տեխնիկական փաստաթուղթը.

Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ Մասնակցի բողոքը հիմնավոր չէ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 03.12.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/89 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/89 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով, Ընթացակարգի 250-րդ և 251-րդ չափաբաժինների մասով հաստատվել է գնման առարկաների հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Հ/հ	Ապրանքի անվանումներ	տեխնիկական բնութագրեր
250	Տիտանային ամրակներ միջին	Տիտանային ամրակներ միջին, քարտրիճով, յուրաքանչյուր քարտրիճում 6 հատիկ ամրակ որը համարվում է չափման 1 միավոր: Ամրակը դիստալ փակման ձևով, 1- 2, 5 մմ անոթների համար: ***Չափերը բաց վիճակում 3,0-3,3x5,0-5,3 մմ***, ***փակած վիճակում 5,0-6,0 մմ***, երկարաձիգ և զուգահեռ ակոսիներով ներքին մակերեսին, ֆիկսացիան ապահովելու համար: Ամրակի արտաքին մակերեսին ակոսիկներ՝ համապատասխանող Պատվիրատուի մոտ առկա սեղմակներին
251	Տիտանային ամրակներ փոքր	Տիտանային ամրակներ փոքր, քարտրիճով, յուրաքանչյուր քարտրիճում 6 հատիկ ամրակ որը համարվում է չափման 1 միավոր: Ամրակը դիստալ փակման ձևով, 0,3-1,5 մմ անոթների համար: ***Չափերը բաց վիճակում 2,0-2,2x3,0-3,2 մմ, փակած վիճակում 3,5-3,9 մմ***, երկարաձիգ և զուգահեռ ակոսիներով ներքին մակերեսին, ֆիկսացիան ապահովելու համար: Ամրակի արտաքին մակերեսին ակոսիկներ՝ համապատասխանող Պատվիրատուի մոտ առկա սեղմակներին:

3. «Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի հրավերի 250-րդ և 251-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերով սահմանված՝ «չափերը բաց վիճակում 3,0-3,3x5,0-5,3 մմ, փակած վիճակում 5,0-6,0 մմ» և «չափերը բաց վիճակում 2,0-2,2x3,0-3,2 մմ, փակած վիճակում 3,5-3,9 մմ» հատկանիշները, որոնք համաձայն «Մեգիէլ» ՍՊԸ-ի բողոքի՝ սահմանափակում են Ընկերության մասնակցությունը: Միևնույն ժամանակ հայտնելով, որ ներկայացված հատկանիշներով տիտանային ամրակներ արտադրում է միայն Ethicon ֆիրման:

4. Պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 02.12.2021թ. թիվ 08-484 գրությամբ բողոքի վերաբերյալ մասնավորապես հայտնել է

հետևյալ դիրքորոշումը. «Պատվիրատուն հստակ պահպանել է օրենսդրությամբ նախատեսված պահանջները, տեխնիկական բնութագրերում չի ներառել խտրական պահանջներ, ընդ որում ապրանքի չափային ցուցանիշները ներկայացրել է տիրույթներով: Բողոքաբերի այն հայտարարությունը, որ 250-րդ և 251-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը բավարարում են միայն Ethicon ֆիրմայի արտադրանքին իրականությանը չի համապատասխանում, քանի որ այդ բնութագրերը համապատասխանում են մեկից ավելի արտադրողների ապրանքներին: Որպես ապացույց ներկայացնում ենք նաև դրանցից ևս մեկը՝ Grena ֆիրմայի արտադրանքի տվյալները»:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 02.12.2021թ. թիվ 08-484 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12» ծածկագրով բաց մրցույթի հրավերը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպես, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-22/12» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով, Ընթացակարգի 250-րդ և 251-րդ չափաբաժինների մասով հաստատվել է գնման առարկաների հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Հ/հ	Ապրանքի անվանումներ	տեխնիկական բնութագրեր
250	Տիտանային ամրակներ միջին	Տիտանային ամրակներ միջին, քարտրիճով, յուրաքանչյուր քարտրիճում 6 հատիկ ամրակ որը համարվում է չափման 1 միավոր: Ամրակը դիստալ փակման ձևով, 1- 2, 5 մմ անոթների համար: ***Չափերը բաց վիճակում 3,0-3,3x5,0-5,3 մմ***, ***փակած վիճակում 5,0-6,0 մմ***, երկարաձիգ և զուգահեռ ակոսիներով ներքին մակերեսին, ֆիկսացիան ապահովելու համար: Ամրակի արտաքին մակերեսին ակոսիկներ՝ համապատասխանող Պատվիրատուի մոտ առկա սեղմակներին
251	Տիտանային ամրակներ փոքր	Տիտանային ամրակներ փոքր, քարտրիճով, յուրաքանչյուր քարտրիճում 6 հատիկ ամրակ որը համարվում է չափման 1 միավոր: Ամրակը դիստալ փակման ձևով, 0,3-1,5 մմ անոթների համար: ***Չափերը բաց վիճակում 2,0-2,2x3,0-3,2 մմ, փակած վիճակում 3,5-3,9 մմ***, երկարաձիգ և զուգահեռ ակոսիներով ներքին մակերեսին, ֆիկսացիան ապահովելու համար: Ամրակի արտաքին մակերեսին ակոսիկներ՝ համապատասխանող Պատվիրատուի մոտ առկա սեղմակներին:

Այսպիսով՝ Ընկերությունը բողոքով պնդել է, որ Ընթացակարգի հրավերի 250-րդ և 251-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերով սահմանված՝ «չափերը բաց վիճակում 3,0-3,3x5,0-5,3 մմ, փակած վիճակում 5,0-6,0 մմ» և «չափերը բաց վիճակում 2,0-2,2x3,0-3,2 մմ, փակած վիճակում 3,5-3,9 մմ» հատկանիշները սահմանափակում են Ընկերության մասնակցությունը Ընթացակարգին:

Այս տեսանկյունից, ուսումնասիրելով Ընթացակարգի տեխնիկական բնութագրերը 250-րդ և 251-րդ չափաբաժինների մասով՝ արձանագրում եմ հետևյալը.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեխնիկական բնութագիրը պետք է լինի հնարավորինս հստակ՝ ներառելով գնման առարկայի բոլոր հատկանիշները և միակ պայմանն այն է, որ տեխնիկական բնութագիրը չպետք է պահանջ կամ հղում պարունակի որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց, իսկ հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Դրա հետ մեկտեղ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն

ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին:

Այսպիսով՝ վերը նշված իրավական կարգավորումներից ելնելով՝ գտնում Ընթացակարգի տեխնիկական բնութագրերը 250-րդ և 251-րդ չափաբաժինների մասով կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխան և չեն հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված՝ տեխնիկական բնութագրի կազմմանը ներկայացվող պահանջներին:

Անդրադառնալով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված այն փաստարկին, որ տեխնիկական բնութագրով նախատեսված հատկանիշներով տիտանային ամրակներ արտադրում է միայն Ethicon ֆիրման՝ արձանագրում եմ, որ սույն մասով Պատվիրատուն հայտնել է, որ նման փաստն իրականությանը չի համապատասխանում, քանի որ այդ բնութագրերը համապատասխանում են մեկից ավելի արտադրողների ապրանքներին և որպես ապացույց ներկայացրել է Grena ֆիրմայի արտադրանքի տվյալները:

Վերոնշվածով հարկ եմ համարում արձանագրել, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 03.12.2021թ. «Մեգիէլ» ՍՊԸ-ին է տրամադրել Պատվիրատուի 02.12.2021թ. թիվ 08-484 գրությունը՝ կից Grena ֆիրմայի արտադրանքի տվյալները, որի վերաբերյալ «Մեգիէլ» ՍՊԸ-ն չի ներկայացրել որևէ դիրքորոշում, որով կհերքվեր Պատվիրատուի կողմից վկայակոչված փաստը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից տրամադրված Grena ֆիրմայի արտադրանքի տեխնիկական բնութագրերը և այն համադրելով Ընթացակարգի հրավերի 250-րդ և 251-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերով սահմանված հատկանիշների հետ՝ ածանագրում եմ, որ Grena ֆիրմայի արտադրանքի տեխնիկական բնութագրերով սահմանված հատկանիշները բավարարում են Ընթացակարգի հրավերով պահանջվող հատկանիշներին, որպիսի պայմաններում հերքվում է բողոքաբերի կողմից վկայակոչված այն պնդումը, որ 250-րդ և 251-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերով նախատեսված հատկանիշներով տիտանային ամրակներ արտադրում է միայն Ethicon ֆիրման:

Վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված՝ գտնում եմ, որ սույն մասով ևս Ընթացակարգի տեխնիկական բնութագրերը չեն հակասում Կարգի 22-րդ կետով սահմանված՝ մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ բավարարելու պահանջներին:

Միևնույն ժամանակ անդրադառնալով «Մեգիէլ» ՍՊԸ-ի այն պնդմանը, որ տիտանային ամրակների չափերը չի դիտարկվում որպես կարևորագույն նախապայման ձեռքբերվող ապրանքի նպատակին ծառայելու և արդյունքին հասնելու համար, և ուսումնասիրելով գործի քննությամբ որպես վկայակոչվածի ապացույց վերջինիս կողմից ներկայացված պետական գնման շրջանակներում կազմակերպված այլ ընթացակարգերով տարբեր պատվիրատուներին, այդ թվում նաև՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին մատակարարված փոքր, միջին և միջին-մեծ չափերի «Տիտանային ամրակներ»-ի առաքման հաշիվ ապրանքագրերը, ինչպես նաև «Բեսթ Լայֆ» հայ-ճապոնական ԲԿ ՍՊԸ-ի կողմից «Մեգիէլ» ՍՊԸ-ին տրամադրված գրությունը, որտեղ մասնավորապես նշվում է, որ սրտի վիրաբուժական միջամտության ժամանակ օգտագործվող բաց վիճակում անոթը կարելու համար նախատեսված տիտանային ամրակների չափերը չի դիտարկվում որպես կարևորագույն նախապայման և վճռորոշ չափորոշիչ, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) ***<u>պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար</u> անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ***.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Այսպիսով՝ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն նպատակներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար յուքանչյուր դեպքում պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը, որից ելնելով օրենսդիրը գնման պահանջին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման լիազորությունը վերապահել է պատվիրատուին:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում հայտնել, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն օժտված չէ այնպիսի լիազորությամբ, որը թույլ կտար վերջինիս տալ գնահատական՝ արդյո՞ք Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերում

ներառված գնման առարկան և դրա համար սահմանված տեխնիկական պահանջները համապատասխանում են Պատվիրատուի կարիքին, թե՞ ոչ:

Վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 30.11.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**